



Գաղտնիք չէ, որ հեռավոր մարզերում ձեռնարկատերերը իրավական առումով ավելի խոցելի են, քան մայրաքաղաքում, ուր կան ձեռնարկատիրության և հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության շահերը պաշտպանելու կոչված բազմաթիվ հասարակական կազմակերպություններ:

Գաղտնիք չէ նաև, որ մայրաքաղաքից հեռու վայրերում ձեռնարկատիրական գործունեությունը ավելի սերտ է շաղկապված ոչ ֆորմալ բարեկամական-հարևանական հարաբերությունների հետ և գործարարները հաճախ խուսափում են բացահայտ արտահայտել այս կամ այն պետական մարմնից իրենց դժգոհությունը: Այդ իսկ պատճառով աչքից հեռու վայրերում գործարարների շրջանում ոչ պետական կազմակերպությունների կողմից անցկացվող հարցախույզները կարող են շատ օգտակար լինել մարզերում

գործերի իրական վիճակի մասին տեղեկատվություն ստանալու առումով:

Ընթերցողը տեղյակ է, որ ընթացիկ տարվա սկզբին Ազգային ժողովն ընդունեց հարկային բարեփոխումների փաթեթ, և շատ ձեռնարկատերեր պարզեցված հարկի դաշտից տեղափոխվեցին ընդհանուր հարկման դաշտ: Միարժամանակ պետականուտների կոմիտեին կտրուկ կրճատեց կազմակերպություններում ստուգումների հաճախությունը, ինչը կարելի է դրական գնահատել:

Բարեփոխումների փաթեթի ընդունումից մի քանի ամիս անց «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ»-ը (ՓԲԲ) նախաձեռնեց ուսումնասիրություն՝ բացահայտելու համար գործարարների տեսակետները հարկային բարեփոխումների, ինչպես նաև ձեռնարկատիրության մշտական մտրակի՝ կոռուպցիայի վերաբերյալ:

Ուսումնասիրության առաջին փուլը իրականացվեց Լոռի, Տավուշ և Վայոց Ձոր մարզերում գործող փոքր և միջին ձեռնարկատիրության ավելի քան հարյուր ներկայացուցիչների շրջանում :

Հաշվիչ-դրամարկային մեքենաների հետ համակերպվել են ...

Սկզբից և ետ ճնշեք, որ հարցման մասնակիցների միայն 2%-ն է գտնում, որ կոռուպցիան մեր երկրում խնդիր չէ: Հարցվածների 15%-ը գտնում է, որ կառավարությունը այդ չարիքի դեմ պայքարելու ցանկություն և քաղաքական կամք չի դրսևորում, իսկ 24%-ի կարծիքով կոռուպցիայի դեմ կիրառվող պայքարի միջոցները անարդյունավետ են: Միարժամանակ հարցվածների ավելի քան մեկ երրորդի կարծիքով հարկային համակարգի կոռումպացվածությունը վերջին երկու տարիների ընթացքում կրճատվել է: Այս փաստը, իրապես, կարելի է խիստ դրական համարել, մանավանդ եթե հաշվի առնենք, որ մեր տնաբույծ գործարարները հաճախ սիրում են խտացնել զույնները և բողոքել նույնիսկ «հարկայինի» իրապես օրինական գործողություններից: Դե, հարկ վճարելը բոլոր ժամանակների գործարարի համար բնավ էլ հաճելի գործ չի եղել:

Պետականուտների կոմիտեն կոռուպցիայի նվազեցմանն ուղղված քայլեր է նախաձեռնում՝ կրճատելով ձեռնարկատերերի և հարկային գործակալների միջև անմիջական շփման անհրաժեշտությունը: Կողմերի միջև այսպիսի «անցանկալի» շփումը, որպես կանոն, տեղի է ունենում կամ ստուգումների կամ էլ հարկային հաշվետվությունների հանձնման ժամանակ: Սա վերոնշյալ մարզերում վերջերս հարկային մարմինների կողմից ստուգումների են ենթարկվել հարցման մասնակից ձեռնարկատերերի 30%-ը, և դրանցից 20%-ը «խնդիրներ» են ունեցել ... Ընդ որում յուրաքանչյուր տասներորդ հարցման մասնակից խոստովանել է, որ ունի հարկային մարմինների հետ կոռուպցիոն փոխհարաբերությունների անձնական «փորձ»: Կասկած չկա, ցանկացած պատկեր ունի իր դրական կողմը: Այսպես, վերջին տվյալներից ելնելով, պետք է գոհ լինել, որ այդ բնույթի արատավոր «փորձը» համատարած և համընդհանուր բնույթ չի կրում: Սակայն, չի կարելի բացառել նաև կոռուպցիոն փաստերի ավելի մեծ տեկուսը, եթե հաշվի առնենք ձեռնարկատերերի նման կասկածելի հաջողությունները թաքցնելու բնական ցանկությունը: Ինչ վերաբերվում է հաշվետվությունների

հանձնման ժամանակ «անձնական շփումներին», ապա հարցվածների մեկ քառորդից պակասն են նշել, որ օգտվում են հաշվետվությունները հեռակա կերպով հանձնելու հնարավորությունից: Քանակը ինքնին մեծ չէ, սակայն առաջընթացը ակնհայտ է, եթե հիշենք այն ժամանակը, երբ նման հնարավորությունը բացակայում էր: Մինչդեռ երբեմն ձեռնարկատերերն իրենք են հաշվետվությունները հարկային մարմիններին ձեռքից ձեռք հանձնելու ցանկությամբ տոգորված: Ըստ հեղինակի կարծիքի, որի հիմքում ինչպես ձեռնարկատերերի, այնպես էլ առանձին հարկային մարմինների ներկայացուցիչների հետ ունեցած մասնավոր գրույցներն են, այս երևույթի բացատրող պատճառները քիչ չեն: Առաջինը՝ հաշվետվություններում հնարավոր սխալներից, համեմայն դեպս, ապահովագրվելու ցանկությունը, ապա՝ տարրական սովորույթը և երրորդը՝ որը երբեք չի կարելի բացառել, «որոշ հարցեր» տեղում լուծելու ձեռնարկատիրոջ ցանկությունը:

Հարցախույզը չէր կարող անուշադրության մատնել այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին է հաշվիչ-դրամարկղային մեքենաների համատարած ներդրումը, որը ժամանակին հատկապես տոնավաճառներում «տրորվող» ձեռնարկատերերի կողմից բուռն դիմադրության արժանացավ: Առևտրականներից շատ-շատերը այդ որոշումը գնահատեցին որպես ձեռնարկատիրական գործունեության ազատության դեմ ոտնձգություն, անցում դեպի շուկայի կարգավորման տոտալիտար եղանակի և կոմերցիոն գաղտնիքի բռնի բացահայտման փորձ: Այժմ կրքերը փոքր ինչ հանդարտվել են և, ի պատիվ ձեռնարկատերերի, հաշվիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը ընդունվում է որպես դեպի քաղաքակիրթ բիզնես և բաղձալի եվրաչափանիշներ ողջված քայլ: Այդ է վկայում հարցման մասնակիցների շրջանում կառավարության այս քայլին հավանություն տվողների անսպասելի բարձր տոկոսը (62%):

Պատժելի՞ է արդյոք բարությունը.

Ձեռնարկատերերի կարծիքով, պարտադիր սոցապ վճարների ներկայիս դրույթաչափերը ստիպում են գործատուներին ունենալ չգրանցած, այսինքն, անօրինական աշխատողների: Այս առումով առաջարկվում է կիրառել ձևակերպված աշխատողների թվից կախված դրույթաչափերի ռեգրեսիվ սանդղակ: Ընդ որում բյուջեի մուտքերի բացասական տարբերությունը կկոմպենսացվի ձևակերպված «նոր» (այսինքն «ոչ օրինական» հին) աշխատողների եկամտահարկերի հաշվին: Ուշադրության են արժանի նաև շրջանառությունը, այլ ոչ թե շահույթը հարկելու, ապրանքային մնացորդի հաշվառումը կարգավորելու, սահմանամերձ տարածքներում պարտադիր սոցապ վճարների գծով 0,5% գործակցի միջոցով արտոնություն սահմանելու մասին առաջարկությունները: Փոքր և միջին ձեռնարկատերերը դժգոհում են նաև խոշոր մատակարարներից մեծաքանակ գնումների դիմաց փաստաթղթերի ձեռքբերման խնդիրից: Խոշոր բիզնեսից գնումների փաստաթղթավորման խնդիրը ստվերի դեմ պայքարի առումով, մեծ նշանակություն ունի: Բայց արի ու տես, որ այս հարցը դեռևս լուծված չէ ... :

Մտահոգիչ է գյուղական վայրերում դրամարկղային կտրոնների դիմաց անվճարունակ համագյուղացիներին «ապառիկ, վստահության հիման վրա» ապրանքների տրամադրման խնդիրը: Նման բարության պատճառով տրված կտրոններին համապատասխան դրամարկղում կանխիկ գումարի առկայության ստուգման ժամանակ վաճառողը հարկային մարմնի կողմից կարող է մեծ տուգանքի արժանանալ: Մինչդեռ կանխիկ դրամ չունեցող հարևանին «պարտքով» ապրանք չտրամադրելը դժվար է և, ավելին, ոչ մարդասիրական: Հաշվի առնելով նման պրակտիկայի համատարած բնույթը այս հարցը ևս շուտափույթ կարգավորման կարիք ունի:

«Հասարակական կազմակերպությունները» առաջարկում են

Առանձին գործարարների կարծիքներից զատ օգտակար է լսել նաև գործարարության շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների կարծիքները: Այսպես օրինակ՝ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության» գործադիր տնօրեն Գագիկ Մակարյանը այլոց թվում առաջարկում է ստուգումների ժամանակավոր մորատորիում սահմանել (նշենք, որ այս ուղղությամբ արդեն որոշակի քայլեր արվել են.- Ա.Խ.), դիվերսիֆիկացնել հարկային ռեժիմը, ներդնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթը: Դրանից բացի, առաջարկվում է ապահովել ձեռնարկատիրության աջակցությանն ուղղված պետական ծրագրերի բացարձակ թափանցիկություն: Կարելի է վստահորեն ենթադրել, որ փորձառու մասնագետի նման առաջարկությունները ամենեւին էլ լավ կյանքից չեն:

Երկի թե հայրենական գործարարության վրա ունեցած գլոբալ ճգնաժամի հետևանքներն են ստիպել «Բիլայն» ՍՊԸ նախագահ Հայկ Խանջյանին հանդես գալ շահույթի ժամանակավոր նորմ սահմանելու,

ինչպես նաև տնտեսության գիտատար և ինովացիոն ճյուղերը հատուկ ուշադրության արժանացնելու առաջարկներով: «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամի» նախագահ Սամվել Մխիթարյանը, հանդես է եկել համայն գործարարության երազանքն արտահայտող առաջարկով՝ թեթևացնել հարկային բեռը, միաժամանակ ուժեղացնելով հարկային ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարը և ուժեղացնել հասարակական կազմակերպությունների դերը հարկային ոլորտում կարգ ու կանոնի հաստատման գործում: Թե ինչպե՞ս է կարելի կենսագործել վերոնշյալ առաջարկությունները, հարկային մարմինները կարող են պարզել փոքր և միջին բիզնեսի շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ առաջիկա համատեղ քննարկումների արդյունքում: Անշուշտ, հարկային մարմիններին անկասկած դուր կգա հարկերից խուսափելու համար պատժամիջոցների խստացման առաջարկությունը, որը պետության հարկային եկամուտների կտրուկ կրճատման պայմաններում կարող է նկատելի արդյունք տալ, հատկապես՝ խոշոր բիզնեսի մասով: Պետության կողմից մենաշնորհային գործունեության կանոնակարգմանն ուղղված մշտական կոչն այս անգամ հնչեցրեց «Տաքսի ծառայությունների միության» գործադիր տնօրեն Էդուարդ Կիրակոսյանը:

Ճոխության համար՝ բարձր հարկ.

Կան նաև բացահայտ վիճելի առաջարկություններ, սակայն արժե դրանց ևս անդրադառնալ: Այսպես.օրինակ, առաջարկվում է ոչ առևտրային կազմակերպությունների շրջանառությունից ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) չգանձել: Մի կողմից կարծես նման առաջարկությունը թելադրված է առողջ դատողությամբ: Սակայն դրա կենսագործման արդյունքում նախ կկրճատվեն պետության հարկային եկամուտները (որոնք արդեն իսկ կտրուկ կրճատվել են), ապա անբարեխիղճ ձեռնարկատերերի համար սողանք կառաջանա: Արդյունքում ստիպված կլինենք գործարար-զեղծարարների դեմ պայքարի նոր՝ լրացուցիչ ճակատ բացել: Դրական կարելի է համարել «Բիզոն-1» ՍՊԸ տնօրեն Սուրեն Կարապետյանի առաջարկությունը՝ ներդնել «կցված» հարկային գործակալի ինստիտուտ, որի աշխատանքի արդյունքը կգնահատվի տվյալ ձեռնարկության հաջողություններից ելնելով: Հետաքրքիր է նաև սուբսիդիար պատասխանատվություն կրող հարկային միջնորդի ինստիտուտի ներդրման մասին առաջարկությունը, որը պարտատիրոջ հետ մեկտեղ պատասխանատու է պարտատուի առաջ հարկային պարտավորությունների կատարման համար: Առաջարկվում է ներդնել անշարժ գույքի հարկման պրոգրեսիվ սանդղակ: Եթե հաշվի առնենք Լյուդովիկոս XIV-ի ոճի պալատներով զանգվածային կառուցապատման խնդիրը, պետության նման քայլը հնարավորություն կտա շեշտակի ավելացնել հարկային մուտքերը և հակազդել նմանատիպ շինությունների կառուցմանն ուղղված ֆինանսների ոչ ռացիոնալ ծախսին:

Հ.Գ. Անշուշտ, մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ թվարկել ձեռնարկատերերի և նրանց շահերը պաշտպանող ՀԿ-ների կողմից հնչեցրած այն բոլոր գործնական առաջարկությունները, որոնք ուղղված են հարկային դաշտի բարեփոխումներին, գործարարների և հարկային մարմինների միջև փոխհարաբերությունների կարգավորմանը և այլն: Մնում է հուսալ, որ դրանք կդառնան երկու կողմերի համատեղ քննարկման առարկա, մանավանդ, որ նման հանդիպումների նախադեպը առկա է և տվել է փոխզիջման բնույթի լավ արդյունք:

“Республика Армения” [№ 061 \(719\), 18 сентября 2009](#)